Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

46 (1445) • 6 դեկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ



# 02 Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Զորավարժություն Ոստիկանության զորքերում

Դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ Ոստիկանության զորքերի հատուկ նշանակության գումարտակի մարտավարամասնագիտական զորավարժություն, որին ներկա էին ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանն ու ոստիկանության զորքերի հրամանատար Վահե Ղազարյանը:



Մինչ զորավարժության մեկնարկը Ոստիկանության զորքերի ծառայողները ներկայացրին ստորաբաժանումների սպառազինությունն ու տեխնիկան:

Զորավարժությունն անցկացվեց մի քանի փուլով: Ըստ սցենարի՝ ահաբեկչական խմբավորումը ոչնչացնում է զինված պահակախմբին եւ գրավում հատուկ պահպանվող օբյեկտը: ՈԶ հատուկ նշանակության գումարտակի անձնակազմը խմբավորմանը վնասազերծելու եւ ոչնչացնելու նպատակով բաժանվում է 3 խմբի՝ շրջափակման, պատսպարման եւ գրոհային: Շենքը շրջափակվում է: Իրականացվում են ականապատման աշխատանքներ: Հրամանը հնչելուն պես ոստիկանները գրոհում են, դիպուկահարները ոչնչացնում են մուտքերի ու պատուհանների մոտ գտնվող ահաբեկիչներին:



Ահաբեկչական խմբավորման երեք անդամներին հաջողվում է փախչել. նրանք մտնում են հարակից բնակելի շենք եւ պատանդ վերցնում երկու քաղաքացու: Շենքը շրջափակվում է: Որոշվում է խումբ ուղարկել բանակցությունների համար:

Ահաբեկիչները պահանջում են ավտոբուս՝ օդանավակայան մեկնելու համար: Մեքենան տրամադրվում է: Ավտոբուսի շարժվելուց հետո սկսվում է դրա գրավման եւ ահաբեկիչների վնասազերծման օպերացիան: Ահաբեկիչները վնասազերծվում են, պատանդներն՝ ազատ արձակվում:

Զորավարժության երկրորդ փուլում ցուցադրվեցին շինություն ներթափանցելու գործողություններ:

Երրորդ փուլում ցուցադրվեցին ոստիկանության զորքերի գործողությունները զանգվածային անկարգությունների ժամանակ:

Չորրորդ փուլում ոստիկանության զորքերի ծառայողները ցուցադրեցին ինքնաձիգով, ատրճանակով եւ դանակով ձեռնամարտի հնարքներ:

Զորավարժության ավարտին ծառայողներին դիմեց ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանը:

## Դանակահարվածը մահացավ

Նոյեմբերի 26-ի առավոտյան Հրազդանի Կենտրոն թաղամասի իր բնակարանից հիվանդանոց տեղափոխվեց 66-ամյա մի տղամարդ: Կրծքավանդակին կտրած-ծակած վնասվածքները կյանքի հետ անհամատեղելի էին. նա մահացավ:



Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ու Հրազդանի բաժնի քրեական հետախույզները հանցագործությունը բացահայտելու նպատակով համագործակցեցին քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Կոտայքի մարզային քննչական վարչության ծառայողների հետ: Համատեղ միջոցառումների արդյունքում պարզվեցին դեպքի մի շարք հանգամանքներ:

Տղամարդը տնից դուրս էր եկել աշխատանքի գնալու եւ շքամուտքի աստիճանահարթակին դանակահարվել էր: Մի կերպ բարձրացել էր տուն ու գիտակցությունը կորցրել: Ժամանած «շտապօգնությունը» նրան հասցրել էր հիվանդանոց:

Շուտով հայտնի դարձավ, որ աշխատանքի շտապող տղամարդուն շքամուտքի աստիճանահարթակին երկու երիտասարդ տղաներ էին սպասել: Վարկածը հիմնավորվեց օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում:

Ոստիկանության Հրազդանի բաժին բերման ենթարկվեցին Հրազդանի բնակիչ 19 եւ 18 տարեկան կասկածյալները, որոնցից մեկը սպանվածի հարեւանն էր:

Նրանք կալանավորվե են:

## Ծեծել էին 80-ամյա կնոջն ու կողոպտել



Հոկտեմբերի լույս 20-ի գիշերը Գյումրու Կամոյի փողոցի իր տնից մարմնական վնասվածքներով հիվանդանոց էր տեղափոխվել 80-ամյա մի կին: Մուշի բաժնի օպերատիվ խմբին տուժածը հայտնել էր, որ գիշերը դիմակավորված երկու անձ մտել են տուն, ծեծել իրեն եւ փող ու ոսկի հափշտակել:

Սկսվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Մուշի ոստիկանների միջոցառումներին միացան նաեւ Շիրակի մարզային վարչության եւ Ախուրյանի բաժնի գործընկերները:

Նոյեմբերի 28-ին ոստիկանության Ախուրյանի բաժնում օպերատիվ տվյալներ ստացվեցին հանցագործությունը կատարած անձանց ինքնության վերաբերյալ: Ոստիկանների օպերատիվ տեսադաշտում հայտնված գյումրեցի երկու երիտասարդները հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին:

Կատարվում է նախաքննություն:

## Նա միլիցիայի առաջին զոհերից էր



Մեր ժողովրդի տագնապի ու հույսերի խռովահույզ տարիներին, երբ զարթոնք էր ապրում ազգային ոգին, երբ մեր սահմանները, Արցախը վտանգի մեջ էին, երբ դեռեւս չունեինք կանոնավոր բանակ, եւ պատերազմի ողջ փորձությունն ու ծանրությունը ժողովրդի ոգու, ազատամարտիկների, հայրենասիրության, անձնուրացության, խիզախության վրա էր, մեր գործընկերներից շատերը, որպես օպերատիվ իրավիճակի փորձառուներ, իրենց ոգու, կամքի, արիության վճռականությամբ երկիր պահող կամավորականների կողքին էին՝ ստանձնելով Հայրենիքը պաշտպանելու պատասխանատվությունը:

Ուժեղ, կամային, վտանգին ընդառաջ նետվելու պատրաստ այդ տղաներով Հայաստանի ոստիկանությունը ապացուցեց ոչ միայն պետական, այլեւ ազգային կառույց լինելը:

էջ 2

## Դանակահարել էր քեռուն եւ քեռորդուն



Դեկտեմբերի 1-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում հաղորդում ստացվեց, որ կտրած-ծակած վնասվածքներով հոսպիտալացվել են 50-ամյա մի տղամարդ ու նրա 23-ամյա որդին:

Հիվանդանոց մեկնած ոստիկաններին չհաջողվեց զրուցել դանակահարված անձանց հետ. նրանք վիրահատվում էին:

Տարոնի բաժնի քրեական հետախույզները կատարվածի հանգամանքները պարզեցին ու հանցագործությունը բացահայտեցին ժամերի ընթացքում:

50-ամյա տղամարդը եւ քրոջ որդին կենցաղային հարցերի շուրջ վիճել էին, որի ընթացքում երիտասարդը դանակահարել էր քեռուն ու քեռորդուն:

Բացատրական աշխատանքի արդյունքում 23-ամյա կասկածյալը ներկայացավ ոստիկանության Տարոնի բաժին, որտեղից էլ ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

## Ավազակություն ծերունու նկատմամբ



Նոյեմբերի լույս 23-ի գիշերը ոստիկանության Տաշիրի բաժնում հանցագործության մասին հաղորդում ստացվեց: Լեռնահովիտ մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ երկու երիտասարդ մտել էին միայնակ ապրող 80-ամյա տղամարդու տուն, կպչուն ժապավենով փակել քնած ծերունու բերանն ու 105 հազար դրամ գողացել:

Տաշիրի քրեական հետախույզները բացառապես օպերատիվ ճանապարհով պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ: Կասկածվողները՝ Տաշիրի բնակիչ եւ Արծնի գյուղի բնակիչ երիտասարդները վերցվեցին օպերատիվ տեսադաշտ: Փաստական տվյալների հիմնավորումից հետո նրանք բերման ենթարկվեցին:

Կատարվում է նախաքննություն:

### «Համալսարանականը»



*Ապակին ճաքեց, միացավ անվտանգության համակարգն ու ազդարարեց նրա ներկայությունը տարածքում:*

էջ 3

### Թրաֆիքինգն ինչպես որ է



*Մարդկությունը վաղուց անցյալ ժամանակով է խոսում ստրկատիրական հարաբերությունների մասին, բայց...*

էջ 6

### Ախտանիշը՝ թմրամոլություն



*Թմրանյութերից կախվածություն ունեցող մարդը հիվա՞նդ է, թե՞ հանցագործ. հարցն հրապարակ պատասխաններ ունի:*

էջ 7

# Նա միլիցիայի առաջին զոհերից էր

Սկիզբը՝ էջ 1

«Հինգ տարի հետո կլինեմ միլիցիայի բարձրագույն դպրոցի սովորող: Ինչպես մինչեւ հիմա եմ ապրել, կշարունակեմ այսուհետ եւս լինել ազնիվ, շիտակ ու բարի: 23 օգոստոսի, 1987 թ., Տովագյուղ»:

Սամվել Գուլանյանի երազանքերդման խոսքերն են, որ պահ էր տվել թղթին, երբ ավարտում էր դպրոցը: Դասընկերներով հավաքվել էին, յուրաքանչյուրն իր երազանքն էր հանձնել թղթին, ծալել, լցրել էին շշի մեջ ու թաքցրել շիշը՝պայմանավորվելով, որ կբացեն տասը տարի անց:

Տարիներ անց հավաքվեցին, բացեցին շիշը. ամեն մեկն իր գրածը կարդաց, իսկ Սամվելինը կարդացին բոլորով: Կարդացին արցունքախառն հուզմունքով. իրենց ազնիվ, շիտակ ու բարի դասընկերն իրենց հետ չէր՝ լուսավոր հիշողություն, արժանապատիվ ապրելու, հայրենասիրության դաս ու պատմություն էր դարձել: Իրենց սիրելի դպրոցի հարեւանությամբ հուշակոթող էր դարձել, որ արծվային հայացքով ամեն օր ընդունի ու դեպի կյանք ճանապարհի համագյուղացի երեխաներին, որոնց լուսավոր ապագայի համար նաեւ զոհեց իր կյանքը...

Սամվելը ծնողների ավագ որդին էր: Վարդգես եւ Վարսենիկ Գուլանյանները նրա հետ կապված բազում երազանքներ ունեին, բայց...

«Սամվելս այս պատերազմի առաջին զոհերից է, չհասցրինք էլ ամուսնացնել»,- անափ տխրություն, անսահման կարոտ, նաեւ հպարտություն կա ծնողների աչքերում. հպարտություն, որ որդին է պատգամում, որի իրավունքը որդին է տվել...





Ոստիկան դառնալը Սամվել Գուլանյանի պատանեկան տարիների երազանքն էր, որ իրականություն դարձրեց դպրոցն ավարտելուց հետո:

Բանակում ծառայությունն ավարտելուց հետո ընդունվեց ներքին գործերի համակարգ՝ ծառայության անցնելով Սեւանի ներքին գործերի բաժնում: Պարեկապահակետային ծառայության ոստիկան էր, միլիցիայի սերժանտ: Իսկ նպատակը հստակ էր. ընդունվել միլիցիայի բարձրագույն դպրոց, դառնալ սպա:

Չհասցրե՛ց. ժամանակները խառն էին:

Ու ժամանակի հրամայականն էր, որ սահմանամերձ տարածքները պաշտպանող կամավորական ջոկատների կողքին լինեն ներքին գործերի համակարգի ստորաբաժանումները՝ մեր առաջին կանոնավոր ռազմական միավորումները:

Տովագյուղցի միլիցիոներ 24-ամյա Սամվել Գուլանյանը առաջին սահման մեկնողներից էր:

1989-ի աշունն էր. Գորիսի տարածաշրջանի սահմանամերձ գյուղերը վտանգի մեջ էին. ադրբեջանցիների հետ զինված ընդհարումները դառնում էին շարունակական: Գորիս գործուղված ոստիկանական խմբի մեջ էր նաեւ պարեկապահակետային ծառայության միլիցիոներ Սամվել Գուլանյանը:

Նոյեմբերի 29-ին ծանր մարտեր էին Խնձորեսկ գյուղի տարածքում: Դա Սամվելի վերջին մարտն էր: Իսկ ինքը Գորիսի տարածաշրջան մեկնած ներքին գործերի ստորաբաժանումների առաջին զոհերից էր...

Հայրենիքին կյանքը նվիրաբերած քաջորդիները, սակայն, անմահ են. նրանք ձուլվում են հավերժությանը եւ ընդմիշտ մնում ապրողների շարքերում: Նրանք վեհ հիշողություն են դառնում, հիշողություն, որը սիրելու, պահելու պարտք ու պատասխանատվություն ունենք:

Բո՛րս:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

## Հիշատակի խոսք



Կյանքից անժամանակ հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Համիկ Հովհաննիսյանը:

Համակարգ էր ընդունվել 1993 թվականին՝ որպես ավագ օպերլիազոր, այնուհետեւ՝բաժնի պետ ծառայության անցնելով ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ում:

2000 թվականի հուլիսից աշխատանքի է անցել կադրերի գլխավոր վարչությունում: Տասնութ տարի ծառայելով այս ստորաբաժանումում եւ վարելով տարբեր պաշտոններ՝ մշտապես իրեն դրսեւորել է որպես բանիմաց, սկզբունքային, բարեխիղճ սպա, պատրաստակամ ու վստահելի գործընկեր, ինչի շնորհիվ վայելել է հարգանք ու հեղինակություն, արժանացել խրախուսանքների:

2018 թ. հուլիսից 2019 թ. սեպտեմբեր՝ մինչեւ թոշակի անցնելը, աշխատել է ոստիկանության կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունում:

Համիկ Հովհաննիսյանի հիշատակը վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**Ոստիկանության կադրային քաղաքականության վարչություն**

# Չարաշահումներ են արձանագրվել



Ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Արարատի մարզի Արեւաբույր համայնքի նախկին եւ ներկա ղեկավարները, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2011-ից 2019 թվականը Արեւաբույրի համայնքապետարանում պահակ են ձեւակերպել համայնքի ներկայիս ղեկավարի կնոջը, որը չի ներկայացել աշխատանքի: Պահակի պարտականությունները կատարել է ներկայիս համանքի ղեկավարի պապը, որը ստացել է աշխատավարձ՝ ստորագրելով համայնքապետի կնոջ փոխարեն:

Բացի այդ, համայնքի նախկին ղեկավարը 2011-2015 թթ. երեք անգամ կազմել եւ սոցիալական աջակցության տարածքային գործակալություն է ներկայացրել կեղծ տեղեկանքներ՝ իբր ներկայիս համայնքապետի կինը Արեւաբույրի համայնքապետարանի աշխատակից է եւ գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում: Այդ կեղծ տեղեկանքների հիման վրա ներկայիս համայնքապետի կինը հաշվառվել է սոցիալական աջակցության տարածքային գործակալության «Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ» համակարգում եւ երեք երեխաներից յուրաքանչյուրի համար ստացել ինչպես ծննդօգնության միանվագ, այնպես էլ երկու տարի՝ յուրաքանչյուր ամսվա համար նախատեսված գումարները:

Ըստ նախնական տվյալների՝ Արեւաբույր համյանքի նախկին եւ ներկա ղեկավարները, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, կեղծ աշխատանքային ստաժ ձեւակերպելու, ինչպես եւ համայնքապետարանի դրամական միջոցները հափշտակելու նպատակով, կազմել եւ ստորագրել են ներկայիս համայնքապետի կնոջն աշխատանքի ընդունելու, արձակուրդ տրամադրելու, աշխատավարձ դուրս գրելու համար կեղծ փաստաթղթեր:

Հարուցվել է քրեական գործ:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

## Մեքենան փախցրել էր ու վթարի ենթարկվել



Նոյեմբերի 27-ին ոստիկանության Աշտարակի բաժնում հաղորդում ստացվեց, որ Ոսկեվազ գյուղի Մաշտոցի փողոցից առեւանգել են մի երիտասարդի «ՎԱԶ 2106»-ը:

Ահազանգին արագ արձագանքած ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները շտապեցին գյուղ մտնող ճանապարհներ, որպեսզի առեւանգված մեքենայի ընթացքը կասեցնեն, բայց մեքենան չկար: Ոստիկանները շուտով տեղեկություններ ստացան, որ մեքենայի ընթացքն արդեն իսկ կասեցվել է. Ոսկեվազ գյուղի Արագածի փողոցում մեքենան վթարի էր ենթարկվել. բախվել էր բետոնե արգելապատնեշին: Մեքենան փախցրած 32-ամյա տղամարդը, որ Օշական գյուղի բնակիչ է, մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Աշտարակի հիվանդանոց, որտեղից էլ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն: Նա դեռեւս բժիշկների հսկողության տակ է, եւ ոչ միայն բժիշկների: Աշտարակի ոստիկանները սպասում են նրա ապաքինմանը:

«Վազ-2106»-ը տեղափոխվել է ոստիկանության Աշտարակի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

## Բացահայտվեցին գողության դեպքեր

Դեկտեմբերի լույս 2-ի գիշերը ոստիկանության Կենտրոնական բաժնում ահազանգ ստացվեց, որ երկու հոգի, կոտրելով դուռը, փորձում են մտնել Տերյան փողոցի պանդոկներից մեկը: Ահազանգից րոպեներ անց դեպքի վայր հասան ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի ոստիկանները: Պարեկայիններին տեսնելով՝ երիտասարդները փախան, բայց ոչ հեռու: Բռնվեցին Կորյունի փողոցում ու բերման ենթարկվեցին ոստիկանության Կենտրոնական բաժին:



Խոսքը Երեւանի բնակիչներ 16 եւ 18 տարեկան երիտասարդների մասին է, որոնք բերման ենթարկվելուց հետո ձերբակալվեցին: Նրանք նման առիթներով բազմիցս հայտնվել էին ոստիկանների տեսադաշտում: Կենտրոնականի քրեական հետախույզները փաստական տվյալներ ունեին, որ Կենտրոն վարչական շրջանի տարբեր հաստատություններից գողություններ են արել: Կասկածները հիմնավորվեցին փաստերով. պարզ դարձավ, որ ձերբակալված երիտասարդները տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Տերյան փողոցի արագ սննդի կետերից մեկի դուռն ու դյուրակիր համակարգիչ եւ բջջային հեռախոսներ գողացել: Դեկտեմբերի 1-ին մտել են Տերյան փողոցի խմորեղենի խանութ, սակայն ինչ-ինչ պատճառներով հանցագործությունն ավարտին չէին հասցրել:

Կատարվում է քննություն:

**Մ. Ս.**

## Մեքենաներ՝ կեղծ համարանիշերով




Նոյեմբերի 29-ին ճանապարհային ոստիկանության առաջին սպայական գումարտակի ծառայողները հայտնաբերել են հատուկ քննչական ծառայության կեղծ համարանիշերով «BMW X6» մակնիշի ավտոմեքենա, որը տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք: Նախապատրաստված նյութերը, ըստ ենթակայության, փոխանցվել են տարածքային բաժին՝ հետագա ընթացքը լուծելու:

Ճանապարհային ոստիկանության երկրորդ սպայական գումարտակի ծառայողներն էլ հայտնաբերել են «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, որը շահագործվում էր հաշվառումից հանված ռուսական համարանիշերով: Այս դեպքում եւս նախապատրաստված նյութերն ըստ ենթակայության փոխանցվել են տարածքային ստորաբաժանում՝ հետագա ընթացքը լուծելու:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի և նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Համալսարանականը»

Երեւանի պետական համալսարանի հետ Արտակ Թումասյանը որեւէ կապ չունի, բայց մի տեւական շրջան պարտաճանաչ գալիս-գնում էր, խառնվում «համալսարանական» կուտակումներին, ու ոչ ոք գլխի չէր ընկնում, որ այդ երիտասարդի փորացավն ուրիշ է:

Համալսարանի ուսանողները նրա ով լինելը հետո իմացան: Իմացան միայն տուժողները:

Արտակը քսաներկու տարեկան է, նախկին դատվածությունը` չմարած: Բագրատունյաց պողոտայում մի տարեց կնոջ էր կողոպտել: Կողոպուտը հաջողությամբ գլուխ էր բերել, բայց օրեր անց Շենգավիթի ոստիկանները բերման էին ենթարկել, հետո էլ պայմանական-վաղաժամկետ ազատվել էր պատժի կրումից:

Անօրեն ճանապարհի ընտրած այս երիտասարդը օպերատորի մասնագիտություն եւ աշխատանք ունի, բայց ազնիվ աշխատելու ցանկություն` ոչ: Ու սկզբում միտքը, հետո արդեն անծամբ սկսեց պտտվել մայրաքաղաքի փողոցներում` կողոպուտի հարմար թիրախ գտնելու մամար: Գտավ. պետհամալսարանի տարածքում կայանված մեքենան էր, որի սրահում երեւում էր նոթբուքը: Մի քանի անգամ գնաց-եկավ, մինչեւ տարածքն ազատվեց ուսանողներից: Հատուկենտ անցորդները խոչընդոտ չէին. վստահ ու վարժ շարժումներով երկու-երեք րոպեում համակարգչի տեր դարձավ:

Հաջորդ թիրախ-մեքենան դարձյալ համալսարանի տարածքում էր կայանել:



Դարձյալ ապակու մյուս կողմից «աչքով էր անում» նոթբուքը: Ժամը 15-ի սահմաններում վերջապես հարմար պահ եղավ: Մոտեցավ մեքենային ու թափով խփեց ապակուն: Ապակին չկոտրվեց` ճաքեց, միաժամանակ միացավ անվտանգության համակարգն ու ազդարարեց նրա ոչ բարի ներկայությունը տարածքում:

Մեքենայատերը, որ դասի էր, լսարանի պատուհանից նայեց ու իր «աղմկարար» մեքենայի մոտ նկատեց անծանոթ երիտասարդին: Մտածեց` պատահաբար դիպավ: Հեռացավ պատուհանից: Քիչ անց, սակայն, մեքենան կրկին «աղմկեց». Արտակը կիսատ թողած գործն էր շարունակում: Վայրկյաններ անց համակարգիչն իրենն էր: Մեքենայատերը պատուհանից ինչքան ուզում է ձայն տար, թե` հեռու իմ մեքենայից, ինքը գործը կիսատ թողնողը չէր:

Համակարգիչները վաճառեց: Հենց իր աշխատավայրում էլ գտավ գնորդներին: Հինգհարյուրհազարանոց համակարգիչները վաճառեց կես գնով: Քիչ փող չէր. մի քանի օրում ծախսեց: Իսկ մի քանի օր անց հայտնվեց ոստիկանությունում...

Փորձեց հորինված պատմություններով պատճառաբանել գործընկերներին վաճառած համակարգիչների հետ իր կապը: Իբր Վրաստանում էր գնել. մեկը` վաճառելու, մյուսը` իր համար, բայց հետո փոշմանել ու երկուսն էլ վաճառել էր: Ի վերջո հասկացավ, որ հորինվածքները հիմնավոր ապացույցների ճնշմանը չեն դիմանում: Խոստովանեց:

Քրեական օրենսգրքի հետ այնքան էլ օտար չէր. երեք տարի անց կրկին «մտերմանալու» առիթ ունեցավ:

Հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Գողացել էր չհրկիզվող պահարանը



Նոյեմբերի 21-ին ոստիկանության Կապանի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Մի կնոջ բնակարանից գողացել էին չհրկիզվող պահարան, որի մեջ եղել էր 20 հազար դոլար ու ոսկյա զարդեր:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության, Սյունիքի մարզային վարչության ու Կապանի բաժնի ծառայողները համատեղ միջոցառումներով փաստական տվյալներ ձեռք բերեցին գողությունը կատարած անձի վերաբերյալ: Օպերատիվ միջոցառումներով հայտնի դարձան նաեւ դեպքի հանգամանքները:

Նոյեմբերի լույս 24-ի գիշերը կասկածյալը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն: Քաջարանի բնակիչ, 38-ամյա տղամարդը ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին, խոստովանական ցուցմունք տվեց ու ձերբակալվեց:

Հետագա միջոցառումներով իրավապահները ձորակում հայտնաբերեցին նաեւ չհրկիզվող պահարանը, որն արդեն դատարկ էր:

Հարուցվել է քրեական գործ:

# Խողովակների գողությունը բացահայտվեց



Ոստիկանության Եղեգնաձորի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գողացել են Արենի եւ Ռինդ բնակավայրերի միջնամասում գտնվող ու Արենի համայնքին պատկանող խողովակները: Չափչտակել էին տարբեր տրամաչափի մի քանի հարյուր մետր խողովակ: Համայնքին պատճառվել էր 2 միլիոն դրամից ավելի վնաս:

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզեցին պետական-հասարակական ունեցվածքի գողության մի շարք հանգամանքներ, որոնց հիման վրա կասկածանքով բաժին բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ, 58-ամյա մի տղամարդու, որը խոստովանական բացատրություն տվեց:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ կասկածյալը խողովակները «ԿամԱԶ»-ով տեղափոխել էր Գեղարքունիքի մարզ եւ գողոնի մի մասը մի քանի հարյուր հազար դրամով վաճառել մի ընկերության տնօրենի, մյուս մասը, դարձյալ մի քանի հարյուր հազար դրամով, վաճառել էր ջրահեռացման աշխատանքներ կատարող մի տղամարդու:

Քննությունը շարունակվում է:

# Գողություններ ու գողության փորձեր



Աբովյան քաղաքում եւ Մայակովսկի գյուղում վերջին երկու ամիսներին մեկ տասնյակից ավելի բնակարանային գողություններ ու գողության փորձեր էին կատարվել: Տուժողներից ոմանք ոստիկանություն էին դիմել, ոմանք` ոչ: Հարուցվել էին քրեական գործեր:

Առաջին դեպքը ոստիկանության Կոտայքի բաժնում գրանցվել էր հոկտեմբերի 2-ին: Հարմարեցված գործիքով բացել էին Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի տներից մեկի պատուհանը եւ ննջարանից հափշտակել 800 հազար դրամ եւ 80 հազար դոլար:

Բացահայտման ուղղությամբ միջոցառումներ էին ձեռնարկվում, երբ հոկտեմբերի 11-ին նույն փողոցից նոր ահազանգ ստացվեց: Տներից մեկի պատուհանը հարմարեցված գործիքով բացելիս կոտրել էին ապակին, մի ննջարանից գողացել ոսկյա եւ արծաթյա զարդեր, մյուսից` փող:

Օրեր անց, դարձյալ Կոտայքի փողոցից, բնակարանային գողության երրորդ ահազանգը ստացվեց: Օգտվելով տանտերերի բացակայությունից` պատուհանով ներս էին մտել եւ հյուրասենյակի պահարանից գողացել ոսկյա զարդեր:

Մոտ մեկ շաբաթ անց նույն եղանակով փորձել էին Սարալանջի փողոցի մի տնից գողություն անել, բայց, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, գործն ավարտին հասցնել չէին կարողացել:

Գողության փորձի եւս երեք դեպք ոստիկանության Կոտայքի բաժնում գրանցվեց նոյեմբերին:

Երկուսը Աբովյանում էր կատարվել, մեկը` Մայակովսկի գյուղում:

Վերլուծելով դեպքերը` ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողները փորձում էին հասկանալ` ինչով էին իրարից տարբեր եւ ինչ ընդհանրություններ ունեին: Որոշվեց ուժեղացնել քրեական հետախուզության եւ համայնքային ոստիկանության բաժանմունքների համագործակցությունը, օպերատիվ իրավիճակին տիրապետելու համար ակտիվացնել շփումը բնակիչների հետ:

Ստացված տեղեկությունների եւ փաստերի համադրությունը հուշում էր, որ բնակարանային գողություններն ու գողության փորձերը հնարավոր է կատարած լինի Մայակովսկի գյուղի 32-ամյա մի բնակիչ, որը նախկինում բնակարանային գողությունների համար դատապարտվել էր եւ ամիսներ առաջ էր քրեակատարողական հիմնարկից ազատվել:

Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո նոյեմբերի 19-ին, ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների հետ համատեղ միջոցառումներով, բաժնի քրեական հետախույզները կասկածվողին Մայակովսկի գյուղից բերման ենթարկեցին ոստիկանության Կոտայքի բաժին:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին 32-ամյա տղամարդը Աբովյան քաղաքի եւ Մայակովսկի գյուղի վարչական տարածքներում կատարել էր եւս երկու բնակարանային գողություն եւ մեկ գողության փորձ:

Նախաքննությունը շարունակվում է:

# Կոռուպցիոն դեպք է բացահայտվել

Ոստիկանության Ապարանի բաժնի ծառայողները ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Արագածոտնի մարզի Վարդենուտ գյուղի ղեկավարը եւ գյուղապետարանի հաշվապահը, ըստ ձեռք բերված նախնական տվյալների, 2009-2017 թթ. գյուղապետարանում պահակ են ձեւակերպել մի տղամարդու, որի աշխատավարձի միայն մի մասն են վճարել:



Բացի այդ, 2012-2015 թթ. գյուղապետարանում հավաքարար աշխատած մի կնոջ եւ տրակտորիստ հրամանագրված մի տղամարդու ամսական վճարել են 10 հազար դրամ, այն դեպքում, երբ հավաքարարը հրամանագրված չի եղել, իսկ տրակտորիստի աշխատավարձը կազմել է ամսական մոտ 33 հազար դրամ:

Նշված չարաշահումների հետեւանքով, այս պահին քննությանը հայտնի տվյալներով, պետությանը պատճառվել է մոտ 1 միլիոն դրամ նյութական վնաս:

Հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Թմրամիջոց` սահմանային անցակետում



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, պետեկամուտների մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների հետ Բագրատաշենի սահմանային անցակետում մաքսային զննության ենթարկեցին Երեւանի բնակիչ, 42-ամյա մի տղամարդու: Հայտնաբերվեցին շագանակագույն հետքերով կաթուցիչ ու 7 գրամ քաշով մարիխուանայի նմանվող զքանզված: Զննվեց նաեւ նրա ավտոմեքենան: Շարժիչի կափարիչի տակ հայտնաբերվեց մաքսային հսկողությունից թաքցված տարբեր տեսակի դեղամիջոցներ` ընդհանուր 7 կիլոգրամ:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Պարտք ու պահանջ



Արթիկցի Նունե Սահակյանի ամուսինը մեկնել էր Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Ամիսներ անց ընտանիքի ապրուստի միջոցը վաստակած՝ կվերադառնար: Իսկ մինչ այդ Նունեն որոշեց երեք անչափահաս երեխաների հետ բնակվել հայրական տանը: Այդպես ավելի ապահով էր, նաեւ որոշակի գումար կտնտեսեր:

Նունեի հայրական տան հարեւանությամբ էր ապրում Անահիտ Մելիքյանը: Նա բոլոր հարեւանների հետ բարիդրացիական հարաբերություններ ուներ: Հարկ եղած դեպքում նաեւ օգնում էր:

Նունեի մայրը՝ Նվարդը, Անահիտին խնդրեց իրենց համար սննդամթերք գնել՝ փողը հետո տալու պայմանով: Գնված ապրանքի արժեքը 25 հազար դրամ էր: Նվարդը եւս 5 հազար դրամ խնդրեց՝ պարտավորվելով կարճ ժամանակում վերադարձնել պարտքը: Բայց ամիսներ անցան, իսկ Նվարդը պարտքի մասին չէր մտածում:

Սեպտեմբերի վերջին Նունեն Անահիտից, դարձյալ փողը հետո տալու պայմանով, հագուստ գնեց:

Անահիտի համբերության բաժակը, սակայն, լցվեց եւ որոշեց պարտքի մասին հիշեցնել Նվարդին ու Նունեին:

Նունեն դստեր եւ եղբոր երկու երեխաների հետ տանն էր, երբ ներս մտավ Անահիտը ու պահանջեց պարտքը: Նունեն արդարացավ՝

- Ամուսինս դեռ փող չի ուղարկել:

Պարտք ու պահանջի շուրջ սկսեցին վիճել, որի ընթացքում Անահիտը խփեց Նունեին: Վեճին միացավ նաեւ Նվարդը: Մի խոսքով, պարտապանը պարտատիրոջը տնից դուրս հրավիրեց, հետն էլ հրեց, եւ Անահիտը հավասարակշռությունը կորցնելով՝ ընկավ ու վնասեց դեմքը:

Փաստով ոստիկանության Արթիկի բաժնում նյութեր նախապատրաստվեցին:

Կատարվում է քննություն:

# Չափազանց գողություն



Արթիկցի Արամ Հարությունյանը, Արմեն Պողոսյանը, Արթուր Պետրոսյանը եւ Վարդան Մալխասյանը ընկերներ են: Հաճախ են միասին ժամանակ անցկացնում:

Հոկտեմբերի 28-ին եւս հանդիպեցին ու սկսեցին շրջել փողոցներով: Ավրոկայանի մոտով անցնելիս ոտքները կախ գցեցին, քանզի պարսպապատ փարածքը դարձավ նրանց զրույցի «հիթը»:

Արմեն Պողոսյանը նախկինում այնտեղ նկատել էր մետաղյա խողովակներ եւ ձողեր: Որոշեցին փարածքից գողություն կատարել: Պարիսպը հաղթահարելով՝ հայտնվեցին հակառակ կողմում: Մետաղյա խողովակներն ու ձողերը դարպասի փակով դուրս հանեցին եւ սկսեցին փեղափոխման մասին մտածել: Սակայն այդպես էլ մեքենա գտնել չկարողացան եւ գողոնը մայթեզրին թողնելով՝ հեռացան:

Ժամեր անց տարածքի սեփականատերը փուն վերադառնալիս նկատեց մայթին դրված իր ապրանքը:

Կատարվածի մասին տեղեկացան նաեւ ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում պարիսպը «հաղթահարածների» ինքնությունը պարզվեց:

Կատարվում է քննություն:

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Զվարճալի ամփոփագիր

## Սեռական բնույթի երկարատեւ գերություն

Ոստիկանության բաժնում հաղորդում է տվել 17-ամյա մի աղջիկ: Ըստ նրա՝ 2018 թվականի հունիսի 2-ին իրենց քաղաքի կենտրոնական փողոցից, ամուսնության նպատակով, մի տղա խաբեությամբ իրեն տարել է հայրենի գյուղ՝ իրենց տուն, որտեղ շուրջ վեց ամիս իր կամքին հակառակ պահել եւ դարձյալ իր կամքին հակառակ՝ սեռական բնույթի հարաբերություն է ունեցել իր հետ:



Աղջիկը պատմել է, որ հունվարին տղան որպես ժամկետային զինծառայող զորակոչվել է բանակ, որից հետո նրա ծնողները մինչեւ մայիս, կրկին իր կամքին հակառակ, պահել են իրենց տանը եւ պարբերաբար բռնությունների ենթարկել իրեն:

Եվ միայն մայիսին, իր ծնողների ակտիվ միջամտությամբ, նա վերադարձել է հայրենի տուն:

## Քարակռիվ

Ոստիկանություն է զանգել մի տղամարդ եւ հայտնել, թե հարեւանը քարով խփել է կնոջը:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ ահազանգողի տան մոտ նրա 60-ամյա կնոջը վիճաբանության ժամանակ քարով խփել է 73-ամյա հարեւանուհին: Գլխին ու ձեռքին ստացած վնասվածքները, սակայն, նրան չեն խանգարել, որ ինքն էլ իր հերթին քարկոծի հարեւանուհուն՝ պատճառելով վնասվածք:

Երբ թնդանոթները կրակում են՝ ամուսինները զանգում են ոստիկանություն:

## Ակն ընդ ական

69-ամյա մի տղամարդ, վարելով «Ֆորդ էքսփլորեր» մեքենան, փողոցում բախվել է 12-ամյա հեծանվորդի, որը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

Մինչ տեղի ոստիկանները պարզում էին դեպքի հանգամանքները, նույն հիվանդանոցից հաղորդում է ստացվում, որ բուժօգնություն են ցույց տվել 69-ամյա մի տղամարդու: Նա հայտնել է, որ իրեն ծեծի են ենթարկել:

Պարզվել է, որ երկու դեպքում էլ խոսքը նույն տղամարդու մասին է. հեծանվորդ երեխայի հայրը, մայրը եւ միջին տարիքի եւս երկու տղամարդ ծեծել են նրան՝ պատճառելով վնասվածք:

Տղայի վիճակը, սակայն, դրանից չի թեթեւացել:

## Հաչող գողոն

27-ամյա մի կին հաղորդում էր տվել, որ ցերեկը իր տան մոտից գողացել են իր խին ցեղատեսակի շունը՝ պատճառելով 240 հազար դրամի վնաս:

Ոստիկանության ծառայողներ, շան գողությունը կատարելու կասկածանքով, իր տան մոտից բերման են ենթարկել 69-ամյա մի տղամարդու: Նա տվել է խոստովանական բացատրություն եւ ներկայացրել գողոնը:

# Ի՞նչ է քրեական լրատվությունը

Սկիզբը՝ նախորդ համարում

Քրեական լրագրության հիմնական նպատակը լսարանին ճշգրիտ տեղեկացնելն է միջադեպերի, հասարակական կյանքին եւ անհատին վտանգ սպառնացող դեպքերի մասին: Մեկ այլ խնդիր եւս՝ կանխարգելիչ գործողություններ, օրինակ՝ տվյալ քաղաքի բնակիչները զգուշացվում են, որ քաղաքում ազատության մեջ հայտնված հանցագործ կա: Խուճապ չառաջացնելու համար նաեւ զգուշացնում են, որ պատկան մարմինները տիրապետում եւ վերահսկում են իրավիճակը: Հասարակությունը պետք է իմանա, որ իր մասին մտահոգվողներ կան, եւ ամեն ինչ անելու են դրությունն առանց ցնցումների կարգավորելու համար:

Վերջին տասնամյակներում ավելի հաճախ ենք հեռուստաէկրանին տեսնում քրեական հաղորդաշարեր, այս կամ այն հանցագործի կամ հանցագործության մասին պատմող, իրական փաստերի վրա հիմնված դեպքեր: Միշտ էլ նման հաղորդումները մեծ պահանջարկ են վայելել: Վատն այն է, որ էկրաններին երեւացող արյունը չի վանում հեռուստադիտողներին, այլ՝ հակառակը: Դա լրագրողների թերացումն է: Հասկանալի է, որ բոլորը ցանկանում են լինել տեղեկացված, եւ օգտվելով այդ հանգամանքից ու ժամանակակից տեխնիկայի ընձեռած հնարավորություններից՝ հեռուստաընկերություններն ու լրագրողները հասարակությանը հրամցնում են այն, ինչը բարձրացնում է իրենց վարկանիշը:

Որքան իրական է ներկայացվում բռնությունը, սպանությունը, այնքան հեռուստադիտողի մեջ մեծ արձագանք է գտնում: Քրեական նորությունների միջոցով հեռուստաընկերությունները կարողանում են իրենց վարկանիշը բարձրացնել:

Մարդու հոգեբանական հիմնական պահանջների բավարարումը 21-րդ դարում դարձել է շատ լրատվամիջոցների շահույթի հիմնական աղբյուր:

Քրեական լրատվությամբ պետք է զբաղվեն մարդիկ, որոնք այդ ոլորտում փորձառու են, հստակ տիրապետում են տեղեկատվության նրբություններին, գիտեն հասարակությանն ինչ «չափաբաժնով» եւ ինչ «պարբերականությամբ» կարելի է տեղեկատվություն տրամադրել:




Միջազգային շատ փորձագետներ այն կարծիքին են, որ իրականում քրեական լրատվություն գոյություն չունի. դրանով զբաղվում են «քոփի փաստ» անողները կամ դեդին մամուլի «դրոշմողները»:

Որոշ փորձագետներ յուրովի են բացատրում քրեական պատմությունների նկատմամբ հետաքրքրության պատճառները: Օրինակ՝ բռնության տեսարաններ նայելիս մարդկանց մի որոշակի խումբ չի վախենում, չի սարսափում, հակառակը, հաճելի զգացողություններ է ունենում. դա էլ սուր զգացողություններով սյուժեների սիրահարների «կորիզն» է:

Մասնագետների մի խումբ էլ գտնում է, որ քրեական խրոնիկա դիտող անձը էյֆորիայի վիճակում է: Ֆիլմից հետո հեռուստադիտողը հասկանում է, որ տեղի ունեցածն իր հետ չի պատահել, բայց կարող է ուսանելի լինել իր համար:

Քրեական նորությունները ուժեղ զգացողություններ են առաջացնում: Բերքլիի եւ Ֆլորիդայի համալսարանների հոգեբանները քրեական խրոնիկան համեմատում են սարսափ-ֆիլմերի հետ եւ գալիս հետեւության, որ որոշ մարդիկ իրենց դժբախտ են համարում, ու դրանից ելնելով՝ ցանկանում են վախենալ, սարսափել, իսկ բռնության տեսարաններից հաճույք են ստանում:

Հոգեբանների մի խումբ պնդում է, որ հեռուստատեսությամբ ցուցադրվող քրեական նորությունները, քրեական տարր պարունակող ֆիլմերը մարդուն ապականում են, դարձնում անսիրտ, ցինիկ, առաջացնում են ագրեսիա: Դրանք հատկապես կործանարար ազդեցություն ունեն անչափահասների վրա: Կա նաեւ այլ տեսակետ՝ հենց անչափահասների համար քրեական նորությունները կամ ֆիլմերը կարող են լինել ուսանելի: Նրանք պետք է գիտակցեն, որ ցանկացած հանցարարք, ի վերջո, պատժվում է:

Առաջին խմբի հոգեբանները պնդում են նաեւ, որ հեռուստատեսությունը անբարոյականություն, ալկոհոլամոլություն եւ նմանատիպ այլ արատներ է քարոզում: Արդյո՞ք այս կարծիքը կիսում են երկրորդ խմբի հոգեբանները: Նրանք ոչ միայն համամիտ չեն, այլեւ բերում են իրենց փաստարկները՝ հեռուստատեսության ուսուցողական, դաստիարակչական դերի ու նշանակության մասին:

*Շարունակելի*

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 33 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության փորձի, ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու եւ խուլիգանության, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի եւ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 1-ը՝ կողոպուտի եւ շորթման, 3-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախությանը հանցակցելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ յուրացնելուն կամ վատնելուն հանցակցելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու եւ ինքնիրավչության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելուն հանցակցելու եւ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ անօրինական միգրացիայի կազմակերպման, 1-ը՝ ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված անձի փախուստի համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 3 հետախուզվող:

Արձանագրվել է 109 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 140-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 35 դեպք. 2 մարդ զոհվել է, 33-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

## Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 2-ին Երեւանի Գարեգին Նժդեհի փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-21074» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի վարորդը եւ ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Գյումրիի Խրիմյան Հայրիկի փողոցում վրաերթի է ենթարկել 68-ամյա կնոջ եւ իր մեքենայով նրան հիվանդանոց տեղափոխելուց հետո ներկայացել է ոստիկանություն:

■

Դեկտեմբերի 2-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 318-րդ կմ-ին բախվել է «Տոյոտա Կալդինա» մակնիշի ավտոմեքենայի հետնամասին. «ՎԱԶ-2106»-ի երկու ուղեւորուհիները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արտաշիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 44-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին Վերին Արտաշատ-Քաղցրաշեն գյուղամիջյան ճանապարհի Այգեզարդ գյուղի հատվածում իրար են բախվել «Ֆորդ Տրանզիտ» բեռնատարը եւ «ՎԱԶ-2107». վարորդները եւ «ՎԱԶ-2107»-ի 15-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին Մարտունի-Վարդենիս-Քարվաճառ ճանապարհի 5-րդ կմ-ին իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին Մարտունի-Վարդենիս-Քարվաճառ ճանապարհի 30-րդ կմ-ին իրար են բախվել «Նիսան Տիանա» եւ «Տոյոտա 4 Ռաններ» մակնիշի ավտոմեքենաներ. հինգ քաղաքացիներ մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեւան ճանապարհի 46-րդ կմ-ին ընկել է ձորակը. չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին «Դեեռ Պիկապ» ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կոմիտասի պողոտայի եւ Ա.Խաչատրյան նրբանցքի խաչմերուկում վրաերթի է ենթարկել 80-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 2-ին «Տոյոտա» մակնիշի մեքենայի վարորդը Երեւանի Վախթանգի փողոցում վրաերթի է ենթարկել 73-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Բագրատունյաց փողոցում իրար են բախվել «Նիսան», «Օպել» եւ «Հյունդայի» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի եւ «Հյունդայի»-ի վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Ղափանցյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. երկու ուղեւորներ մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «ՎԱԶ-21140» մակնիշի մեքենան Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 1-ին կմ-ին շրջվել է. երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «Օպել Զաֆիրա» մակնիշի մեքենայի վարորդը Վանաձորի Տիգրան Մեծի փողոցում վրաերթի է ենթարկել 59-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Տաշիրի Երեւանյան-Զահուկյան փողոցների խաչմերուկում «Օպել Աստրա» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 73-ամյա քաղաքացու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

# Արցախի ոստիկանության կայացումը

*Սկիզբը՝ նախորդ համարում*

1990 թ. հունվարի 15-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով արտակարգ դրություն հայտարարվեց ԼՂԻՄ-ում եւ նրան հարակից որոշ շրջաններում: Ստեղծվեց ԼՂԻՄ կազմկոմիտե, որի նախագահ նշանակվեց Ադրբեջանի իշխանության երկրորդ դեմք հանդիսացող Վիկտոր Պոլյանիչկոն, որը հայտնի էր իր հակահայ հայացքներով:



Նման իրավիճակում Արցախյան շարժման քաղաքական ղեկավարները գործում էին ընդհատակում, նրանց անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվում էր նույն պայմաններում աշխատող հայ ոստիկաններից: Միաժամանակ, նրանց միջոցով, ուղղորդմամբ եւ անմիջական մասնակցությամբ իրականացվում էին բնակչության իրավունքի պաշտպանության խնդիրները: Միլիցիայի աշխատակիցների նպատակն էր խորհրդային բանակի բարձրաստիճան զինվորականների, ինչպես եւ օպերատիվ-քննչական խմբի անդամներից արցախյան հարցին դրական վերաբերվող անձանց հայտնաբերումն ու ընդհատակում գործող քաղաքական ղեկավարների հետ շփման եզրեր ստեղծելը:

Այսպիսի գործողությունների համար քիչ էր մնացել կյանքով հատուցեր 1990 թ. Ստեփանակերտի զտման կետի պետ, միլիցիայի կապիտան Մավրիկ Գրիգորյանը: Պրոֆեսիոնալ հետախույզին բնորոշ ունակություններով օժտված հայ սպան կարողացել էր գրավել Պոլյանիչկոյի եւ Սաֆոնովի բարեհաճությունն ու վստահությունը, հնարավորություն էր ձեռք բերել տիրապետելու բազմաբնույթ գաղտնի տեղեկատվության, որն էլ փոխանցում էր շարժման ընդհատակյա ղեկավարներին: Մ. Գրիգորյանի՝ իբրեւ թե «ծախու ոստիկան» լինելու «համբավը» հիմք էր հանդիսացել հայ վրիժառուների կողմից նրա նկատմամբ մահվան վճիռ կայացնելուն: Բարեբախտաբար, դա ժամանակին կանխվեց:

Փոխվում էին ժամանակները, անկայուն էր Խորհրդային Միությունը, պետք էր հույսը դնել սեփական ժողովրդի պաշտպանական բնազդի վրա՝ վստահ այն գաղափարին, որ շահում են նրանք, ովքեր կարողանում են ինքնապաշտպանվել, ձեւակերպել սեփական շահը եւ հետամուտ լինել նրան: Արցախում այս բաղադրիչները գործում էին 1988 թվականից եւ աստիճանաբար հասան նրան, որ հայ ժողովրդի դիմադրությունը, պայքարը ժամանակի ընթացքում հասավ հաղթանակի վերջնակետին:

Խորհրդային Միության փլուզումը համաշխարհային քաղաքական գործընթացների մի մասն էր: Պատմական արդարության վերականգնման հրամայականով՝ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի Հանրապետության անկախությունը:

Միլիցիայի աշխատակիցներից կազմված ջոկատը ազատամարտիկների հետ մասնակցել է Ստեփանակերտի շուրջը տեղակայված ադրբեջանական կրակակետերը վերացնելու գործողությանը: 1991 թ. դեկտեմբերին ջոկատն առաջին մարտը վարում էր Հադրութի Քարագլուխ գյուղից, իսկ 1992 թ. մասնակցել է Ստեփանակերտի Կրկժան թաղամասից ադրբեջանական ՕՄՕՆ-ին դուրս մղելու մարտական գործողություններին: Ջոկատն, ի թիվս ՆԳ մյուս ստորաբաժանումների, մասնակցում է նաեւ Սարսանգի հիդրոհանգույցի մարտերին:

Արցախյան ազատամարտին մասնակցեց ԼՂՀ ՆԳ ավելի քան 300 աշխատակից: Նրանցից 41-ը զոհվել են, երեքը համարվում են անհայտ կորած, 7-ը արժանացել է «Մարտական խաչ» շքանշանի: Վիրավորվել եւ 1-ին, 2-րդ եւ 3-րդ խմբի հաշմանդամ են դարձել 42-ը, Շուշիի ազատագրմանը մասնակցել է միլիցիայի 44 աշխատակից:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2001 թ. նոյեմբերի 30-ին ընդունվեց «Ոստիկանության մասին» ԼՂՀ օրենքը, այնուհետեւ՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքը, համաձայն որոնց՝ ԼՂՀ ՆԳ նախարարությունը վերակազմավորվեց ԼՂՀ ոստիկանության, իսկ ՆԳ նախարարության՝ միլիցիայի աշխատակիցը դարձավ ոստիկանության ծառայող:

Համաձայն ԼՂՀ Կառավարության 2003 թ. մարտի 11-ի թիվ 67 որոշման՝ ԼՂՀ ոստիկանության մասնագիտական օրը նշվում էր ապրիլի 16-ին, իսկ արդեն 2014 թ. մարտի 4-ի ԼՂՀ Կառավարության թիվ 124-Ն որոշմամբ՝ նոյեմբերի 30-ին:

ԼՂՀ ոստիկանության կարգախոսն է՝ «Ամեն ինչ հանուն քաղաքացու անվտանգության»:

# Միջազգային վիճակագրություն



Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գումերբախ քաղաքում, 13-ամյա դպրոցականը սպանել էր 81 տարեկան թոշակառու կնոջը: ԱՄՆ-ում այդպիսի դեպքերն ավելի շատ են: 1990 թ. աշնանը Չիկագոյի արվարձանում 16-ամյա տղան ընկերոջից 100 դոլարով վերցրել էր ատրճանակն ու գնդակահարել իր ծնողներին: Նյու Ջերսիի Լամբերտոն քաղաքում 14-ամյա տղան հոր սենյակում գտնելով նրա ատրճանակը՝ ծածրակին արձակած կրակոցով սպանել էր բասկետբոլի թիմի խաղընկերոջը: 1990 թ. մարտին Ֆինիկ քաղաքի 15-ամյա բնակիչ Ջեֆրի Կուպենին գնդակահարել էր նրա մտերիմ ընկեր Հարեթ Դոնթոնը:

ԱՄՆ-ում նման սպանությունների թիվն աճում է...

Հատկապես շատ սպանություններ են կատարում երիտասարդական հանցախմբերի անդամները, որոնք զբաղվում են թմրամիջոցների փողոցային առեւտրով: Նրանցից մեկը, որը կասկածվում էր բանդայի գանձարկղից երկու հազար դոլար գողանալու մեջ, կասկածներն իրենից վանելու համար սպանել էր հանցընկերոջը:

Եթե նման արյունոտ դեպքեր կատարվում են «առաջադեմ» երկրներում, ապա ի՞նչ կարելի է ասել զարգացող պետությունների մասին: Աղքատ եւ անկայուն տարածաշրջաններում իրավիճակը երեխաներին ու անչափահասներին մշտապես մղում է հանցագործության: Օրինակ, Աֆղանստանում պատերազմներին մասնակցում են անչափահասները, որոնք արդեն խաղաղության շրջանում վերածվում են իսկական ավազակների: Նույն վիճակն է նաեւ Լիբանանում, Կամբոջայում, Օլսթերում, Պերուում, Լիբիայում, Իրաքում, Սիրիայում:

Երեխաները պրոֆեսիոնալ մարդասպաններ են դառնում նաեւ խաղաղ ժամանակներում: Օրինակ՝ Կոլումբիայի Մեդելին քաղաքում փողոցային բանդաներում ներգրավված յուրաքանչյուր 20 անչափահասից 2-3-ը շուտով սկսում են աշխատել մաֆիայի համար՝ վերածվելով վարձու մարդասպանների: Չգրված օրենքով՝ ավելի շատ մարդ սպանածներն առավել մեծ հարգանք են վայելում իրենց շրջապատում: Իհարկե, տեղի անչափահասները հատուկ դասընթացներ չեն անցնում, սպանելու «վարպետությունը» կատարելագործում են հենց փողոցում, էժանագին ճաշարաններում ու բիլիարդանոցներում: Աղքատ թաղամասերում օրական միջին հաշվով 25 մարդ է սպանվում: Սակայն մեդելինցի անչափահաս մարդասպաններն իրենք էլ հեշտությամբ քիլերների զոհ են դառնում:

Ամերիկյան ամենապատանի մարդասպանը վերջին տասնամյակում 8-ամյա մի տղա է Ֆերֆաքսից (Վիրջինիա նահանգ), որը հոր ատրճանակով խաղալիս պատահմամբ սպանել էր 6-ամյա քրոջը:

Նախկին ԽՍՀՄ-ում այդ «ռեկորդը» պատկանում է մի 8-ամյա մոսկվացու, որը 1990 թ. նոյեմբերի 8-ին զուգարանի բաքի կափարիչով գլխին հասցրած հարվածով սպանել էր խորթ հորը:

1991 թ. փետրվարի 20-ին Մատվեեւկա գյուղի (Ուկրաինա) երկու ութամյա տղաներ ու մի վեցամյա աղջնակ սպանեցին իրենց տարեկից Գրիշա Վարգային: Նրանց միջեւ վեճ էր սկսվել, վերածվել ծեծկռտոցի, որի ժամանակ մահակներ ու աղյուսի կտորներ էին օգտագործվել: Դրանցից մեկի հարվածն էլ մահացու էր եղել:

1991 թ. օգոստոսին Ավստրալիայում մի երկու տարեկան երեխա 22 մմ տրամաչափի հրացանով գնդակահարել էր 27-ամյա Պատրիկ Էլիոթին: Կրակոցը, բնականաբար, պատահական էր, իսկ պատճառը՝ զենքի տիրոջ հիմարությունը. նա լիցքավորված հրացանը թողել էր մեքենայի հետեւի նստելատեղին: Երեխան քաշել էր ձգանը. կրակոցն ուղղված էր հրացանատիրոջ գլխին...

# Թրաֆիքինգն ինչպես որ է



***Ազատությունն ու արժանապատվությունը հասարակության գիտակցության մեջ ամրագրված են իբրեւ 21-րդ դարի մարդ-քաղաքացու պաշտպանվածության երաշխիքներ: Դե յուրե մարդկությունը վաղուց անցյալ ժամանակով է խոսում ստրկատիրական կարգի ու հարաբերությունների մասին, բայց դե ֆակտո ստրկացումն իր որոշ դրսեւորումներով նաեւ մեր դարի չարիքն է:***

Մի շարք երկրներում մարդու թրաֆիքինգի դեմ տարվում է կանոնակարգված պայքար՝ մասնագիտացված իրավապահների կողմից: Հայաստանը դասվում է այդ երկրների շարքին: ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կազմում գործում է թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը:

Փորձենք համառոտ ներկայացնել 21-րդ դարի ստրկությունը՝ թրաֆիքինգը:

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը դասվում է անձի ազատության, պատվի եւ արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների շարքին: Քրեական օրենսգրքի 132 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման համար: 132[1].2 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում երեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման համար: 132[1].3 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից օգտվելու համար:

Թրաֆիքինգը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալն է, որն իրականացվում է հանցավոր միջոցների օգնությամբ, օրինակ՝ բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի, խաբեության, վստահության չարաշահման, վիճակի խոցելիության օգտագործման եւ այլ միջոցներով:

Հայաստանը հիմնականում սկզբնաղբյուր երկիր է, այսինքն՝ զոհերը հավաքագրվում են Հայաստանում եւ տեղափոխվում այլ երկրներ, որտեղ էլ ենթարկվում են շահագործման:

Սեռական շահագործման առումով Հայաստանի համար նպատակակետ երկրներ են Թուրքիան ու Արաբական Միացյալ Էմիրությունները, աշխատանքային շահագործման համար նպատակակետ երկիր է Ռուսաստանի Դաշնությունը:

Գրանցվում են նաեւ ներքին շահագործման դեպքեր, երբ Հայաստանում շահագործվում են ՀՀ քաղաքացիներ, եզակի դեպքերում՝ նաեւ օտարերկրյա քաղաքացիներ:

Որպես անդրազգային հանցագործություն՝ թրաֆիքինգի հակազդումը առանձին երկրների իրավապահ մարմինների խնդիր լինելուց զատ, նաեւ համընդհանուր մտահոգության առարկա է: Այս հարթության վրա միջազգային իրավապահ համագործակցությունը միշտ էլ դրական արդյունքներ է արձանագրել՝ օպերատիվ տեղեկատվության փոխանակումից մինչեւ համատեղ միջոցառումների իրականացում: Մասնավորապես՝ քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության՝ Ինտերպոլի հիմնական գործառույթներից է նաեւ թրաֆիքինգի դեմ պայքարը:

Որպես ամփոփում. թրաֆիքինգի զոհ չդառնալու համար պետք է զգոն ու զգուշավոր լինել, իսկ նրանց, ովքեր կորցրել են զգոնությունն ու զգուշավորությունը, օգնել վերաինտեգրվելու բնականոն կյանքին:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Նախանձախնդիր լինենք մեր իրավունքներին



Անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելն ու վաճառելը, ինչպես եւ աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը քրեորեն պատժելի արարք է: Մինչդեռ շատերն ինչ-որ անպատասխանատու մարդկանց, նրանց անփույթ աշխատանքի պատճառով ստացած վնասի հատուցումը չեն պահանջում նաեւ օրենքի չիմացության պատճառով:

Քրեական օրենսգրքի 279 հոդվածի նկարագրական մասում ասվում է՝ սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ ծառայություններ մատուցելը կամ նշված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների՝ անվտանգության պահանջներին անհամապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթերն ապօրինի հանձնելը կամ օգտագործելը, եթե արարքներն անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը, ենթարկվում են համապատասխան պատժի:

Օրենքը, պատճառված վնասի չափից ելնելով, տարբեր պատիժներ է սահմանում: Պատիժն առավել խիստ է անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանքի կամ ծառայության պատճառով մահ է առաջացել, կամ եթե նման վերաբերմունք դրսեւորվել է մանկահասակների համար նախատեսված ապրանքներ պատրաստելիս կամ աշխատանք կատարելիս:

Օրենքը միշտ տուժողի կողքին է, պաշտպանում է նրա շահերը, եթե տուժողն իր իրավունքների մասին իրազեկված է, եթե անտարբեր չի լռում, երբ անորակ աշխատանքի կամ ապրանքի պատճառով վնաս է կրում: Անտարբերությունն այս դեպքում կբերի մյուս կողմի անպատասխանատվության, այսպես ասած՝ երկարակեցությանը, եւ հաճորդ տուժողը կարող է ավելի ծանր փորձության կամ դժբախտության ենթարկվել:

Անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկողներն ու աշխատանք կատարողները, ցավոք, քիչ չեն. Նրանց պատասխանատվության չենթարկելը մեծ առումով նշանակում է, որ մի շարք ոլորտներում քաղաքակիրթ ու բարձրորակ սպասարկման մասին դեռ պիտի տեւական ժամանակ երազենք:

**Ռ. Պ.**

# Ապօրինի ծառահատումներ Լոռու մարզում



Բնապահպանական ոլորտի իրավախախտումների հայտնաբերման եւ կանխարգելման նպատակով, ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները Սպիտակ-Վանաձոր ճանապարհին ստուգել եւ բաժին են բերել Եղեգնուտ գյուղի 26-ամյա բնակչի վարած «Զիլ» մակնիշի մեքենան՝ բեռնված շուրջ 8 խմ փայտանյութով: Վարորդը փաստաթուղթ չի ներկայացրել, հայտնել է, որ փայտանյութը ձեռք է բերել իրենց գյուղի անտառից ծառեր հատելով:

Ժամեր անց ոստիկանության Լոռու մարզային վարչության եւ Գուգարքի բաժնի ծառայողների համատեղ ծառայության ժամանակ Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում ստուգման է ենթարկվել Վանաձորի բնակիչ, 51-ամյա տղամարդու վարած «Ֆորդ Տրանզիտը»՝ բեռնված մոտ 4 խմ փայտանյութով:

Կրկին փաստաթուղթ չի ներկայացվել: Վարորդը հայտնել է, որ նախորդ երեկոյան Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում անտառից հավաքել է չորուկ փայտանյութ եւ բենզասղոցով հատել մեկ քամատապալ ծառ:

Փայտանյութով մեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Երկու դեպքով էլ նախապատրաստվում են նյութեր:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Գողություն օդանավակայանում



Նոյեմբերի 13-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում հաղորդում ստացվեց, որ «Կարգո» բեռնային համալիրում ավտոմեքենայի լուսարձակներ են գողացել:

Բաժնի քրեական հետախույզները օրեր տեւած օպերատիվ միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ գողությունը կատարել է Շենգավիթում ապրող 29-ամյա մի երիտասարդ: Նա հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին, որտեղ տվեց խոստովանական բացատրություն:

Գողոնն առգրավված է: Նախապատրաստվում են նյութեր:

# Բացահայտվել է թմրաշրջանառության դեպք



Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները, իրացնելով ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ օպերատիվ տվյալները, Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների հետ մայրաքաղաքի Խանջյան փողոցում հայտնաբերեցին ու, մեքենայով հանդերձ, բերման ենթարկեցին Երեւանի երեք բնակչի:

40-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին թմրամիջոցով ներարկիչ, մարիխուանա ու դատարկ ներարկիչ:

50-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին սուբուտեքսի ամբողջական դեղահաբ ու կտորներ:

38-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին հոգեներգործուն դեղահաբեր:

«Մերսեդես»-ի զննությամբ էլ հայտնաբերվեցին թմրամիջոցով ներարկիչ, դեղահաբեր, դատարկ ներարկիչներ ու սրվակներ:

Կապարվում է քննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Մեքենան գողացել էր ու մասնատել



Նոյեմբերի 19-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գողացել են Նազարբեկյան փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենան:

Քրեական հետախույզները ձեռնարկված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ մեքենան գողացել է Երեւանի բնակիչ, 32-ամյա մի տղամարդ: Բացատրական աշխատանքի շնորհիվ նա ներկայացավ ոստիկանության Մաշտոցի բաժին ու խոստովանական բացատրություն տվեց:

Հետագա միջոցառումներով ոստիկանության ծառայողները Արմավիրի մարզում հայտնաբերեցին գողացված մեքենան, որն արդեն մասնատված էր:

Փաստով քննություն է ընթանում:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Ախտանիշը՝ Թմրամոլություն



Ասում են՝ թմրամոլությունից հանցագործություն մեկ քայլ է: Ասում են՝ պատճառաբանելով, որ թմրամոլը կախվածությունը մեղմելու համար կարող է դիմել զանցանքների ու հանցանքների: Նա սկսում է օրենքի հետ տարբեր բարդության խնդիրներ ունենալ: Նման տեսակետ հաճախ է հնչում բժիշկնենի ու ոստիկանության աշխատակիցների՝ թեմային նվիրված հանդիպումների ժամանակ:

Թմրանյութերից կախվածություն ունեցող մարդը հիվա՞նդ է, թե՞ հանցագործ. հարցը իրարամերժ պատասխաններ դեռ կունենա, որովհետեւ բժիշկը յուրովի է մոտենում հիմնախնդրին, իրավապահը՝ յուրովի: Այդ ախտի կանխարգելումն էլ, թեեւ երկու կողմն էլ նույն գործն են անում, իրականացվում է տարբեր մեթոդներով, տարբեր ճանապարհներով: Կարեւորն այն է, որ համագործակցություն կա:

Ներկայացվող դեպքերի, այսպես ասած՝ հերոսները խախտել են քրեական օրենսգրքի 268՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի, եւ 273՝ մշակումն արգելված թմրանյութեր պարունակող բույսեր աճեցնելը, հոդվածները: Դրանք առողջության դեմ ուղղված հանցագործությունների «թույլ» օղակներն են, բայց արդեն քայլ են դեպի հանցագործություն:

Արարատի մարզի բնակիչ Մինաս Հակոբյանը տնամերձում բանջարանոցային բույսեր է մշակում: Վատ բանջարանոց չունի եւ քրտնաջան աշխատում է: Հողի հետ 50-ամյա Մինասի կապվածությունը, հետո պիտի պարզվեր, որ նաեւ այլ բանով է պայմանավորված: Բանջարաբոստանային մշակաբույսերի կողքին նա նաեւ կանեփ է աճեցնում: Միայն անձնական օգտագործմա՞ն, թե՞ նաեւ իրացնելու նպատակով է կանեփը «բարգավաճում» նրա հողամասում: Ինքը պնդում է՝ իբր կանեփը պատահաբար է աճել տնամերձում, իսկ իր ձեռքը չի գնացել մոլախոտը քաղհանելիս կանեփի թփերն էլ արմատախիլ անել: Ընդհակառակը, ավելի մեծ հոգածությամբ հենց այդ թփերին է վերաբերվել:

Հավատալ, թե չհավատալ ոստիկանությունում չքմեղացող Մինաս Հակոբյանի խոսքերին, միեւնույն է. փաստն այն է, որ օրենքով արգելված բույս է մշակել:

Մեր հաջորդ «հերոսը» մայրաքաղաքի բնակիչ է՝ 28-ամյա Արթուր Ավագյանը: Երբ ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, խուզարկությամբ նրա մեքենայից չափաբաժիններով փաթեթավորված մարիխուանա հայտնաբերեցին, խոստովանեց, որ հինգվեց տարի է՝ թմրանյութ է օգտագործում ու այդկերպ իբր հոդացավերը մեղմում:

Նյութերի նախապատրաստման ընթացքում, սակայն, պարզվեց, որ նա ոչ միայն իր ցավերն է «մեղմում», այլ նաեւ՝ ուրիշների, բայց արդեն համապատասխան վճարի դիմաց:

Երբ Սյունիքի մարզի ոստիկանները, իրացնելով օպերատիվ տվյալները, բերման ենթարկեցին 32-ամյա Միեր Վանյանին ու նրա մեքենայի զննությամբ հայտնաբերեցին մոտ կես կիլոգրամ մարիխուանա, նա մի սրտաճմլիկ պատմություն հորինեց: Իբր մայրը ծանր հիվանդ է, ինքն էլ բուժման համար փող չունի, բայց հոգատար ընկեր ունի, որը մարիխուանան տվել է, որ վաճառի՝ փողը ծախսի մոր բուժման համար: Միերի «հեքիաթի» հերոսը եւս հայտնաբերվեց, բայց նրա խոստովանությունը բոլորովին այլ էր. ոչ միայն թմրանյութ են օգտագործում, այլեւ՝ իրացնում:

Բոլոր դեպքերով նյութեր են նախապատրաստվում:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Ձեռագիրը նույնն էր



Նոյեմբերի 22-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում մեքենաներից կատարված գողության երկու դեպք գրանցվեց:

Առաջին ահազանգը օպերատիվ կառավարման կենտրոնից ստացվեց ժամը 12.30-ի սահմաններում: Հայտնում էին, որ կոտրել են Մարգարյան փողոցում կայանված «Մերսեդես» մակնիշի մեքենայի ապակին, սրահից գողացել պայուսակ, որի մեջ եղել էր փող, անձնագիր, նույնականացման ու բանկային քարտեր:

Գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ իրավապահների ձեռնարկած անհետաձգելի միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Միրաքյան փողոցի 30-ամյա մի բնակիչ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին:

Գողոնը հայտնաբերվեց:

Դեպքի առթիվ նյութեր էին նախապատրսատվում, երբ նույն օրը գողության վերաբերյալ մեկ այլ հաղորդում ստացվեց: Ժամեր առաջ կոտրել էին Սեբաստիա փողոցում կայանված «Պեժո» մակնիշի մեքենայի ապակին եւ սրահից դարձյալ պայուսակ հափշտակել, որի մեջ փող էր եղել:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, որ երկու գողություններն էլ նույն մարդու ձեռքի գործն են:

Կասկածվողը մինչ բերման ենթարկվելը հասցրել էր նաեւ Սեբաստիա փողոցում կայանված մեքենայից գողություն անել:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Բացահայտում են Էրեբունու ոստիկանները



Նոյեմբերի 20-ին ոստիկանության Էրեբունու բաժնում գողության չորս դեպք արձանագրվեց: Մի դեպքում տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Էրեբունու փողոցի «Հայփոստի» մասնաճյուղի դուռը ու գողացել հեռուստացույց: Մյուս դեպքում մտել էին «Վիոլա ջուր» ընկերության սպասարկման գրասենյակ, բայց ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված՝ հանցագործությունն ավարտին չէին հասցրել: Երկու դեպքերում գողություն էր կատարվել ավտոսպասարկման ու կահույքի սրահներից:

Քրեական հետախույզներն օպերատիվ միջոցառումների շնորհիվ բացահայտման առումով կարեւորագույն եզրահանգումներ արեցին: Փաստական տվյալներով հիմնավորվեց, որ բոլոր դեպքերում գործել են նույն անձինք: Կասկածվող երիտասարդները, որոնք մայրաքաղաքի բնակիչներ են, հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության Էրեբունու բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Անասնագողությունները բացահայտվեցին



Նոյեմբերի 22-ին ոստիկանության Աշտարակի բաժնում անասնագողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Արտաշավան համայնքի արոտավայրերից մեկից գողացել էին գյուղի մի բնակչի կովը: Անասնագողության վերաբերյալ հաղորդումը ստանալուն պես Աշտարակի քրեական հետախույզներն անցան օպերատիվ միջոցառումների իրականացմանը՝ արագ հասնելով արդյունքի: Անասնագողության կասկածանքով բերման ենթարկված 34-ամյա տղամարդը խոստովանել է, որ կովն ինքն է գողացել, ապա վաճառել:

Նոյեմբերի 26-ին Աշտարակի քրեական հետախույզները անասնագողության վերաբերյալ նոր օպերատիվ տվյալներ ստացան: Տուժողը ոստիկանություն չէր դիմել, սակայն հետախուզական միջոցառումներով փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ Կարին գյուղի 49-ամյա մի բնակիչ գյուղի արոտավայրից գառ է գողացել: Տղամարդը հայտնաբերվեց ու խոստովանական բացատրություն տվեց:

Նախապատրաստվում են նյութեր:

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 30-ին Շարժա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո գծային բաժին բերման է ենթարկվել 1970 թ. ծնված Սալմեն Ա.-ն, որը ոստիկանության Նոր Նորքի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 118 (Ծեծը) եւ 137 (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Էրեբունու եւ Բագումի բաժինների ծառայողները նոյեմբերի 30-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից բերման են ենթարկել 1985 թ. ծնված Զոհրաբ Ս.-ին, որը 2018 թ. ապրիլից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 329.1 հոդվածի (Անօրինական միգրացիայի կազմակերպումը) մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 1-ին ոստիկանությունում հաղորդվել էր 1991 թ. ծնված Մխիթար Գ.-ին մարմնական վնասվածքներով հիվանդանոց տեղափոխելու մասին:

Պարզվել է, որ նա ոստիկանության Վաղարշապատի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 34-104 (Սպանության փորձ), 235 (Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) եւ 258 (Խուլիգանությունը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Նոյեմբերի 29-ին ոստիկանության ծառայողները Արզումանյան փողոցից բերման են ենթարկել Վարդենիս քաղաքի 42-ամյա մի բնակչուհու, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի՝ յուրացնելը կամ վատնելը հոդվածի մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 29-ին ոստիկանության ՔՀԳՎ օպերատիվ խումբը Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան է տեղափոխել Մոլդովայի Հանրապետության 29-ամյա մի բնակիչ, որը 2017 թ. մայիսից Վաղարշապատի բաժնի կողմից հետախուզվում էր տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու մեղադրանքով:

◆

Ոստիկանության Սիսիանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 3-ին բաժին է հրավիրվել 37-ամյա Վաչագան Մ,-ն, որը 2011 թ. ապրիլից ՌԴ ՆԳՆ Մոսկվա քաղաքի գլխավոր վարչության իրավապահների կողմից գտնվում էր միջպետական հետախուզման մեջ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 158 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՔՀԲ ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 3-ին բաժին է ներկայացել 17-ամյա Նաիրա Պ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Շենգավիթի բաժնի ՔՀԲ ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 2-ին բաժին է ներկայացել Տիգրան Ս.-ն, ով դեկտեմբերի 2-ից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 137 հոդածի (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավականություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

